შეფასებისა და გამოცდების
ეროვნული ცენტრი

Ուսուցչի իրավասության հաստատում
հուլիս, 2021

# Երաժշտության թեստ

## Հրահանգ

Ձեր առջև քննական թեստի էլեկտրոնային բուկլետն է:

Թեստը բաղկացած է երկու մասից. I ունկնդրման մաս , II փակ և բաց առաջադրանքներ, որոնք ներկայացված են առանց ունկնդրման նյութերի:

Ունկնդրման մասի համար հատկացված է սահմանված ժամանակ: Թեստի էլեկտրոնային բուկլետում յուրաքանչյուր առաջադրանքի համապատասխան հրահանգում նշված է առաջադրանքը կատարելու համար հատկացված կոնկրետ ժամանակը:

Մնացած ժամանակը ըստ Ձեր հայեցողության բաժանեք թեստի II մասի առաջադրանքները կատարելու համար:

**Թեստի առավելագույն միավորն է՝ 70:**

**Թեստի վրա աշխատելու համար տրվում է 4 ժամ:**

**Մաղթում ենք հաջողություն :**

Հաջորդ էջին անցնելու կամ ետ վերադառնալու համար
կարող եք կիրառել ստեղնաշարի կոճակները:

I մաս՝ ունկնդրում

Ունկնդրման մասն ընդգրկում է տասը առաջադրանք:

Առաջադրանքներ № 1-6:

Հրահանգ: Առաջին վեց առաջադրանքից յուրաքանչյուրը ներառում է մեկ երաժշտական հատված և երկու հարց: Յուրաքանչյուր հարցին կից տրվում է չորս ենթադրական պատասխան, որոնցից միայն մեկն է ճիշտ: Ընտրեք պատասխանը և պատասխանների թերթիկի վրա X նշանով նշեք համապատասխան վանդակը: Ճիշտ պատասխանը գնահատվում է մեկ միավոր, հետևաբար յուրաքանչյուր առաջադրանք՝ երկու միավոր:

Առաջադրանքի համար հատկացված երաժշտական հատվածը լսում եք երկու անգամ: Առաջին և երկրորդ ունկնդրումների միջև դադարը կազմում է 20 վայրկյան:

Նախքան յուրաքանչյուր հատվածի ունկնդրումը տրվում է 10 վայրկյան՝ առաջադրանքի հարցերը կարդալու համար:

*Առաջադրանքները տրված են հաջորդ էջից:*

(2) **Առաջադրանք № 1.**

**Նախքան առաջին երաժշտական հատվածն ունկնդրելը ծանոթացեք առաջադրանքին.**

**1.1 Ո՞ր տարածաշրջանի երգ է:**

ა) Քարթլիի,

ბ) Գուրիայի,

გ) Իմերեթիի,

დ) Սամեգրելոյի,

**1.2 Ի՞նչ ժանրի երգ է:**

ა) խնջույքի,

ბ) ծիսական,

გ) արշավային,

დ) աշխատանքային:

(2) **Առաջադրանք № 2.**

**Նախքան երկրորդ երաժշտական հատվածն ունկնդրելը ծանոթացեք առաջադրանքին.**

**2.1 Ո՞ր ֆիլմից է երաժշտությունը:**

ა) «Երբ ծաղկեց նշենին» („როცა აყვავდა ნუში“),

ბ) «Նինո» („ნინო“),

გ) «Ուրիշի երեխաները» („სხვისი შვილები“),

დ) «Ճպուռ» („ჭრიჭინა“):

**2.2 Ո՞վ է երաժշտության հեղինակը:**

ა) Սուլխան Ցինցաձե,

ბ) Արչիլ Կերեսելիձե,

გ) Գիա Ղանչելի,

დ) Ռևազ Լաղիձե:

(2) **Առաջադրանք № 3.**

**Նախքան երրորդ երաժշտական հատվածն ունկնդրելը ծանոթացեք առաջադրանքին.**

**3.1 Ո՞վ է երաժշտության հեղինակը:**

ա) Էդվարդ Գրիգ,

բ) Լյուդվիգ վան Բեթհովեն,

գ) Սերգեյ Ռախմանինով,

դ) Ռոբերտ Շուման:

**3.2 Ո՞ր ժանրի ստեղծագործություն է:**

ա) ուվերտյուրա (նախերգանք),

բ) կոնցերտ,

գ) սիմֆոնիա,

դ) սոնատ:

(2) **Առաջադրանք № 4.**

**Նախքան չորրորդ երաժշտական հատվածն  ունկնդրելը ծանոթացեք առաջադրանքին.**

**4.1 Ո՞ր դարաշրջանի և/կամ ուղղության երաժշտություն է:**

ա) XIX դարի,

բ) էքսպրեսիոնիզմի,

գ) բարոկկոյի,

դ) կլասիցիզմի:

**4.2 Ո՞ր օպերային ձայնն է կատարում:**

ա) սոպրանո,

բ) կոնտրալտո,

գ) կոլորատուրային սոպրանո,

դ) մեցցո սոպրանո:

(2) **Առաջադրանք № 5.**

**Նախքան հինգերորդ երաժշտական հատվածն ունկնդրելը ծանոթացեք առաջադրանքին:**

**5.1 Ի՞նչ ժանրի երաժշտություն է:**

ա) նոկտյուրն,

բ) ռապսոդիա,

գ) պրելյուդ,

դ) էտյուդ:

**5.2 Ո՞ր ուղղությանն է պատկանում ստեղծագործությունը:**

ա) իմպրեսիոնիզմին,

բ) կլասիցիզմին,

գ) ռոմանտիզմին,

դ) նեոկլասիցիզմին:

(2) **Առաջադրանք № 6.**

**Նախքան վեցերորդ երաժշտական հատվածն  ունկնդրելը ծանոթացեք առաջադրանքին.**

**6.1 Ո՞վ է երաժշտության հեղինակը:**

ա) Իգոր Ստրավինսկին,

բ) Մորիս Ռավելը,

գ) Սերգեյ Ռախմանինովը,

դ) Ջորջ Գերշվինը:

**6.2 Ո՞ր ժանրին է պատկանում հատվածը:**

ա) բալլադի,

բ) ռոմանսի,

գ) վոկալիզի,

դ) օրորոցային:

(1) Առաջադրանք № 7.

<u>Հրահանգ:</u> Ունկնդրեք երաժշտական հնչյունների շարքը: Նոտային գրառման մեջ տրված լադերի չորս տարբերակից ընտրեք ունկնդրածին համապատասխան տարբերակը և պատասխանների թերթիկի վրա X նշանով նշեք համապատասխան վանդակը:

Երաժշտական հնչյունների շարքը լսում եք երկու անգամ:

Նախքան ունկնդրելը տրվում է 5 վայրկյան՝ նոտային գրառումը վերանայելու համար:



(1) Առաջադրանք № 8.

<u>Հրահանգ։</u> Լսեք երաժշտական արտահայտությունը (ֆրազ)։ Նոտային գրառման մեջ տրված չորս տարբեր ռիթմիկ ֆիգուրացիայից ընտրեք ունկնդրածի համապատասխան տարբերակը և պատասխանների թերթիկի վրա X նշանով նշեք համապատասխան վանդակը։

Երաժշտական արտահայտությունը (ֆրազ) լսում եք երկու անգամ։

Նախքան ունկնդրելը տրվում է 5 վայրկյան՝ նոտային գրառումը վերանայելու համար։



(5) Առաջադրանք № 9.

*Երաժշտական թելադրություն:*

Հրահանգ: Ունկնդրեք մեղեդին և գրառեք նոտային համակարգում: Մեղեդին միաձայնային է, ութ տակտանոց և տրված է մեկ տոնայնության մեջ: Այն լսելու և գրելու համար տրվում է 15 րոպե: Մեղեդին լսում եք ձայնագրությամբ հինգ անգամ, յուրաքանչյուր հաջորդող ունկնդրման միջև դադարը կազմում է 2 րոպե:

Թելադրությունը տրված է *Սի բեմոլ մաժոր B dur* տոնայնության մեջ:

*Ձեր կողմից գրառված մեղեդին տեղափոխեք պատասխանների թերթիկի վրա տրված նոտային համակարգ՝ գրչով:*

(13) Առաջադրանք № 10.

*Երաժշտական ստեղծագործության վերլուծություն*

<u>Հրահանգ:</u> Վերլուծեք երաժշտական ստեղծագործության հատվածը՝ ձայնագրության և նոտային գրառման հիման վրա:

Երաժշտական հատվածը լսում եք երեք անգամ, յուրաքանչյուր հաջորդող ունկնդրման միջև դադարը կազմում է 2 րոպե: Նախքան ունկնդրելը տրվում է 30 վայրկյան՝ առաջադրանքի հարցերը վերանայելու համար:

*Հարցերը դիտեք հաջորդ երկու էջի վրա:*

(2) 1. Ո՞ր գործիքային ժանրին է պատկանում տրված երաժշտական հատվածը:

(3) 2. Որոշեք հատվածի՝

ա) սկզբնական տոնայնությունը,

բ) առաջին տակտից 18-րդ տակտը ներառյալ երաժշտական ձևը,

գ) 7-8-րդ տակտերում տրված կադանսի մեջ մտնող ակորդների հարմոնիկ (ներդաշնակ) ֆունկցիաները:

(3) 3. Բնութագրեք, թե ինչպես է զարգանում ստեղծագործության գեղարվեստա-հուզական կողմը, վերլուծեք և հակիրճ նկարագրեք, թե երաժշտական արտահայտչականության ո՞ր միջոցներն են (ինչպիսի՞ մեղեդի, ռիթմ, տեմպ, ռեգիստր, հարմոնիա (ներդաշնակություն), լադատոնայնություն, ֆակտուրա և այլն) հատկապես կարևոր տրված հատվածի երաժշտագեղարվեստական բովանդակությունը ստեղծելու համար:

(2) 4. Ունկնդրած հատվածի երաժշտական բնութագրիչների հիման վրա, որոշեք ստեղծագործության ստեղծման դարաշրջանը և կոմպոզիտորի ինքնությունը:

(3) **5.** Բնութագրեք կոմպոզիտորի ստեղծագործությունները և նշեք, թե ինչ նորարարություն է նա ներմուծել երաժշտության ոլորտում: Քննարկեք ունկնդրած ստեղծագործության պատմամշակութային համատեքստը, դատողություններ արեք կոմպոզիտորի ստեղծագործություններում տվյալ ժանրի նշանակության շուրջ և ընդհանուր առմամբ բնութագրեք ստեղծագործությունը:

*Երաժշտական հատվածի նոտային գրառումը տե՛ս. հաջորդ էջերում:*


Andante grazioso



## Var. I




tr
p
sf
p sf p sf
p




## Var. II




f
tr
p
tr
(simile)


cresc.
f
p
tr



## Var. III






Var. IV
m.s.
f
p


f
(p)
sfp
sfp
fp


m.s.
(f)
Var. V
Adagio
p



II մաս

Առաջադրանքներ № 11-28.

Հրահանգ: Յուրաքանչյուր հարցին տրված է չորս ենթադրական պատասխան: Դրանցից միայն մեկն է ճիշտ: Ընտրված պատասխանը տեղափոխեք պատասխանների թերթիկի վրա հետևյալ կերպ՝ պատասխանների համապատասխան վանդակում դրեք X նշանը: Ոչ մի այլ նշում՝ հորիզոնական կամ ուղղահայաց գծեր, շրջագծում և այլն, չի ընկալվի էլեկտրոնային ծրագրի կողմից: Եթե ցանկանում եք ուղղել պատասխանների թերթիկի վրա նշված պատասխանը, ամբողջությամբ ներկեք վանդակը, որտեղ դրել եք X նշանը, որից հետո նշեք պատասխանի նոր տարբերակը (դրեք X նշանը նոր վանդակում): Հնարավոր չէ երկրորդ անգամ ընտրել այն պատասխանը, որն ուղղել եք: Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավոր

(1) **Առաջադրանք № 11.**

**Իտալացի ո՞ր կոմպոզիտորի ստեղծագործություններում են դրսևորվել վերիզմի միտումները:**

ա) Ջակոպո Պերիի,

բ) Ջուզեպպե Վերդիի,

գ) Ջոակինո Ռոսսինիի,

դ) Ջակոմո Պուչինիի:

(1) **Առաջադրանք № 12.**

**Ո՞ր կոմպոզիտորն է առաջին անգամ օգտագործել տավիղը սիմֆոնիկ նվագախմբի կազմում:**

ա) Անտոնին Դվորժակը,

բ) Գուստավ Մալերը,

գ) Էկտոր Բեռլիոզը,

դ) Ֆրանց Շուբերտը:

(1) **Առաջադրանք № 13.**

**Ո՞վ է «Իմ լուսատտիկ» („ჩემო ციცინათელა“) երգի բանաստեղծական տեքստի հեղինակը:**

ა) Իլիա Ճավճավաձեն,

ბ) Դիմիտրի Փաղավան,

გ) Գրիգոլ Օրբելիանին,

დ) Ակակի Ծերեթելին:

(1) **Առաջադրանք № 14.**

**Թվարկածներից ո՞ր խումբն է *սխալ:***

ա) Երաժշտական տեմպը մատնանշող տերմիններն են՝ vivace, moderato, largo:

բ) Եկեղեցական երաժշտության ժանրի նմուշներն են՝ մեսան, մադրիգալը, մոտետը:

գ) Բալետային ժանրի ստեղծագործություններն են՝ «Լեռների սիրտը», «Գորդան», «Օթելլոն»:

դ) Փայտյա փողային երաժշտական գործիքների խմբում են՝ ֆլեյտան, կլառնետը, հոբոյը:

(1) **Առաջադրանք № 15.**

**Ո՞վ է գրել «Վերա թաղամասի մեղեդիները» կինոմյուզիքլի երաժշտությունը:**

ա) Դավիթ Թորաձեն,

բ) Ռևազ Լաղիձեն,

գ) Գիորգի Ցաբաձեն,

դ) Գիա Ղանչելին:

(1) **Առաջադրանք № 16.**

**Ո՞ր բնութագրումը _չի համապատասխանում_ Ռոբերտ Շումանի «Դիմակահանդեսին»:**

ա) Չորս հնչյունի վրա կառուցված վարիացիաների շարք բազմազան գեղարվեստական պատկերներով:

բ) Դիմակահանդեսային դիմակների և տեսարանների հերթափոխությունը վալսի ֆոնի վրա:

գ) Կոնտրաստային մանրանկարների հակադրությամբ ստեղծված ֆանտազիա:

դ) Դիմակահանդեսի տոնական պատկեր հնագույն պարերով:

(1) **Առաջադրանք № 17.**

**Երաժշտական զարդինչյունների ո՞ր տեսակն է նշանակում մեկ կամ կես տոն հեռավորության վրա գտնվող երկու հարևան հնչյունների արագ հերթագայում:**

ա) մորդենտ,

բ) գրուպետո,

գ) ֆորշլագ,

դ) տրել:

(1) **Առաջադրանք № 18.**

**Ո՞վ է դրել դասական լարային քառյակի ժանրի հիմքը:**

ա) Ֆրանց Շուբերտը,

բ) Լյուդվիգ վան Բեթհովենը,

գ) Յոզեֆ Հայդնը,

դ) Ամադեուս Մոցարտը:

(1) **Առաջադրանք № 19.**

**Ո՞վ է «Դու՝մի նոր խաղողի այգի» („შენ ხარ ვენახი“) կրոնական երգասացության բանաստեղծական տեքստի հեղինակը:**

ა) Թեկլա Բատոնիշվիլին,

ბ) ժողովրդական է,

გ) Դեմետրե առաջինը,

დ) սաղմոսի տեքստ է:

(1) **Առաջադրանք № 20.**

**Զինգշպիլն օպերային ժանր է, որի դրամատուրգիական հիմքն է՝**

ա) վոկալային դրվագների անդադար երաժշտական զարգացումը,

բ) երգային և խոսակցական դրվագների հերթագայումը,

գ) արիաների, secco ռեչիտատիվների, անսամբլների և երգչախմբերի հաջորդականությունը,

դ) արիաների, արիոզային ռեչիտատիվների և անսամբլների հերթագայում:

(1) **Առաջադրանք № 21.**

**Թվարկածներից ո՞րն է չեխական ծագում ունեցող պար:**

ա) մենուետը,

բ) պոլոնեզը,

գ) վալսը,

դ) պոլկան:

(1) **Առաջադրանք № 22.**

**Ո՞ր երաժշտական ժանրը կամ մտածողության ձևը *<u>չի համապատասխանում</u>* Բարոկկոյի դարաշրջանի երաժշտությանը:**

ա) Բարոկկոյի դարաշրջանի պոլիֆոնիկ երաժշտության կարևոր ձևն է ֆուգան:

բ) Նվագարանների մեծ խմբի հետ մենակատարների փոքր անսամբլի հերթագայության և հակադրության հիման վրա ստեղծվում է concerto grosso-ի ժանրը:

գ) Բորոկկոյի երաժշտության կոնտրաստային դինամիկան արտացոլվում են քառամաս սիմֆոնիայի մեջ:

դ) Օպերայի երաժշտադրամատիկական ժանրի շրջանակներում արիայի և ռեչիտատիվի տարբեր ձևեր են ծնվում:

(1) **Առաջադրանք № 23.**

**Ո՞ր սիմֆոնիկ ստեղծագործության մեջ է օգտագործվում վոկալ:**

ա) «Թիլ Ուլենշպիգելի չարաճճի արարքները» պոեմում,

բ) «Բոլերո» պիեսում,

գ) «Միջամառային գիշերվա երազ» նախերգանքում,

դ) «Նոկտյուրններ» եռապատկերում:

(1) **Առաջադրանք № 24.**

**Ի՞նչ ժանրի ստեղծագործություն է Անտոնիո Վիվալդիի «Տարվա եղանակները»:**

ա) դաշնամուրային սյուիտ,

բ) բալետ,

գ) կոնցերտների ցիկլ,

դ) օրատորիա:

(1) **Առաջադրանք № 25.**

**Ո՞ր առանձնահատկությունը** ***բնորոշ չէ*** **Քրիստոֆ Գլյուկի օպերային բարեփոխմանը:**

ա) Ուվերտյուրան (նախերգանք) օպերայի դրամատիկ գաղափարի սիմֆոնիկ ընդհանրացումն է:

բ) Օպերայի առանձին երաժշտական համարները միավորվում են մեծ տեսարանների:

գ) Օպերային երաժշտության շարունակական զարգացումը կառուցված է լեյտմոտիվ համակարգի վրա:

դ) Արիան փոխանցում է օպերայի գործող հերոսի մտքերն ու հույզերը:

(1) **Առաջադրանք № 26.**

**Երաժշտական ո՞ր տերմինն է նշանակում «վեհասքանչ» կատարում:**

ა) Maestoso,

ბ) Tranquillo,

გ) Giocoso,

დ) Dolce:

(1) **Առաջադրանք № 27.**

**Ինչպե՞ս է կոչվում երաժշտական հնչյունի բարձրության փոփոխումը:**

ա) պաուզա,

բ) ակոլադա,

գ) տեմբր,

դ) ալտերացիա:

(1) **Առաջադրանք № 28.**

**Ո՞ր երաժշտական կազմությունն է նոտային գրառման տեսքով ներկայացված հատվածում:**




ա) հետերոֆոնիկ,

բ) պոլիֆոնիկ,

գ) հոմոֆոնիկ,

դ) մոնոդիկ:

Առաջադրանքներ № 29-32.

*Կառուցում նոտայից*

<u>Հրահանգ:</u> Կառուցեք և պատասխանների թերթիկի վրա տրված նոտաների համակարգում գրառեք՝ ինտերվալը, ակորդները և լադը *<u>մի բեմոլ</u>* նոտայից.

(1) 29. մաքուր կվինտա,

(1) 30. մաժոր կվարտսեքստակորդ,

(1) 31. փոքր մինոր սեպտակորդ,

(1) 32. հարմոնիկ մաժոր:

Առաջադրանքներ № 33-35.

*Համապատասխանության որոշում*

Հրահանգ: Առաջադրանքում տրված է թվարկացանկի երկու սյունակ: Որոշեք համապատասխանությունը դրանց միջև: Ձախ սյունակի յուրաքանչյուր տվյալին (1, 2, 3) համապատասխանում է աջ սյունակի միայն մեկ տվյալ (ա, բ, գ, դ, ե): Յուրաքանչյուր ընտրած համապատասխանությունը պատասխանների թերթիկի վրա տրված աղյուսակում նշեք X նշանով: Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավոր:

(3) **Առաջադրանք № 33.**

**Որոշեք համապատասխանությունը վրացական ժողովրդական երգերի և նրանց ծագման տարածաշրջանների միջև:**

1. «Գութնուրի»
2. «Խասանբեգուրա»
3. «Օդոիա»

ა) Ռաճա

ბ) Սամեգրելո

გ) Կախեթի

დ) Գուրիա

ე) Թուշեթի

(3) **Առաջադրանք № 34.**

**Որոշեք համապատասխանությունը գործիքային ստեղծագործությունների և դրանց հեղինակների միջև.**

1. «Ջվիադաուրի»
2. «Ռիծա լիճ»
3. «Ռոնդո-Տոկատա»

ա) Անդրիա Բալանչիվաձե

բ) Սուլխան Ցինցաձե

գ) Սուլխան Նասիձե

դ) Շալվա Մշվելիձե

ե) Ռևազ Լաղիձե

(3) **Առաջադրանք № 35.**

**Որոշեք համապատասխանությունը կոմպոզիտորների և դարաշրջանների/ուղղությունների միջև.**

| | |
|---|---|
| 1. Առնոլդ Շոնբերգ | ա) Կլասիցիզմ |
| 2. Արքանջելո Կորելլի | բ) Վերածնունդ |
| 3. Կլեման Ժանեկեն | գ) Ռոմանտիզմ |
| | դ) Բարոկկո |
| | ե) Էքսպրեսիոնիզմ |

Առաջադրանքներ № 36-40.

*«Ճշմարիտ է-Սխալ է»*

Հրահանգ: Որոշեք տրված դրույթը ճշմարիտ է թե սխալ, եթե համարում եք, որ դրույթը ճշմարիտ է, ապա նշեք X նշանը համապատասխան վանդակում, նման դեպքում մեկնաբանություն անել չի պահանջվում, *իսկ եթե համարում եք, որ դրույթը սխալ է, ապա համապատասխան վանդակում դրեք X նշանը և հատկացված տեղում գրեք ճիշտ բացատրությունը:*

Սխալ դրույթի դեպքում, տրված բացատրությանը համապատասխանեցրեք ճիշտ տերմին/բառ կամ տրված տերմինի/բառի համար գրեք ճիշտ բացատրություն:

Հաշվի առեք, որ պատասխանը չի ընդունվի այն դեպքում, եթե տրված բացատրության դրական ձևը փոխեք բացասականի կամ հակառակը: Յուրաքանչյուր առաջադրանք գնահատվում է 1 միավոր:

(1) **Առաջադրանք № 36.**

Ռոնդոյի ձևը կառուցված է մեկ երաժշտական թեմայի փոփոխված կրկնությունների վրա:

(1) **Առաջադրանք № 37.**

Կլասիցիզմի ժամանակաշրջանի սոնատը, կոնցերտը և սիմֆոնիան մեկմասանի երաժշտական ժանրեր են:

(1) **Առաջադրանք № 38.**

«*Lento*»-ն  երաժշտական տեմպը նշող տերմին է:

(1) **Առաջադրանք № 39.**

«*Dramma per musica*» 16-րդ դարավերջին անվանեցին դրամատիկ բնույթի գործիքային ժանրի ստեղծագործությունը:

(1) **Առաջադրանք № 40.**

«*Staccato*»-ն  երաժշտական գործիքի վրա կատարվող ձևերից մեկն է, որի դեպքում հնչյունները կապակցված են կատարում:

Առաջադրանքներ № 41-42.

*Ժամանակագրության որոշում*

<u>Հրահանգ:</u> Ժամանակագրական առումով՝ հնագույնից դեպի նորագույնը դասավորեք թվարկացանկը: Պատասխանների թերթիկում տրված աղյուսակում ժամանակագրական հաջորդականությունը նշված է թվանշաններով՝ 1-ից մինչև 4-ը: Պատասխանները գրառեք ընտրված թվանշանի երկայնքով՝ այբուբենի համապատասխան տառերով (ա, բ, գ, դ): Յուրաքանչյուր առաջադրանք գնահատվում է 1 միավոր:

(1) **Առաջադրանք № 41.**

**Ժամանակագրական առումով դասավորեք գործիքային սյուիտները՝ ըստ դրանց ստեղծման ժամանակաշրջանի.**

ա) «Կենդանիների շքահանդեսը»,

բ) «Մանկական անկյուն»,

գ) «Պատկերներ ցուցահանդեսից»,

դ) «Երաժշտություն ջրի վրա»:

(1) **Առաջադրանք № 42.**

**Ժամանակագրական առումով դասավորեք վրացական օպերաների թվարկացանկը ՝ ըստ դրանց ստեղծման ժամանակաշրջանի.**

ა) «Քրիստինե»,

ბ) «Երաժշտություն ողջերի համար»,

გ) «Մինդիա»,

დ) «Աբեսալոմ և Էթերի»: